

մասնաւորապէս Կ. Պոլսոյ Պատրիարքութեան, կաշառելով թուրք բարձր պաշտօնատարներն ու վեզիրները, որոնք լայնօրէն կ'օգտուին խռովարար թեկնածուներու այդ յարատեւ, յաւէտ եպերեկի մրցակցութիւններէն (17): Նոյնիսկ աշխարհականներ կը յաջողին Կ. Պոլսոյ Պատրիարքութեան տիրանալ և պատրիարքական իշխանութիւնը վարել, պատճառ դառնալով նորանոր անկարգութիւններու և ապօրէն արարքներու (18):

Առաքել պատմիչ այսպէս կը նկարագրէ այն ժամանակուան Կ. Պոլսոյ հայոց վիճակը. «Որք բնիկ տեղացիք էին ի քաղաքէն կոստանդնուպոլսէ, բարձրամիտ, բարձրայօն պարծանօք հարստահարեալ թեւս ածէին ի վերայ եկամուտ ժողովրդոցն, և իբրեւ զգոհիկ ի չմարդի ունէին զնոսա: Եւ զամենայն իշխանական իրականութիւնս, զգործս և զբանս ի ձեռս իւրեանց գրաւեալ ունէին և գործէին. և զեկամուտսն ի բաց քեցեալ անհաղորդս պահէին: Վասն որոյ և նոքա հոգւով չափ վշտանային ընդ քամահանս իւրեանց, և հանապազ խոցոտիչ և ատելութեան բանիւ դիմադրաւ լեալ ընդ միմեանս մաքառէին...

(17) Լեօ, Հայոց Պատմ. Աճդ 317. Ազգպ. Բ. 2513.

(18) Ազգպ. Բ. 2513, 2515, 2521: